# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՄԻՇՈՓ-Ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 140 | KEFEYA | Screen Extender 15.6" | KEFEYA | Բազմաֆունկցիոնալ Շարժական 2 համակցված Մոնիտորների համակարգ 15.6" (նոթբուքերի և այլ սարքերի համար) Ձեռք բերվող սարքը նախատեսված է որպես նոթբուքերի, անհատական համակարգիչների, պլանշետների, սմարթֆոնների և խաղային կոնսոլների լրացուցիչ կամ հիմնական արտաքին էկրան: Այն իրենից ներկայացնում է ուլտրաբարակ, թեթև և շարժական (պորտատիվ) մոնիտոր, որը հեշտությամբ տեղավորվում է պայուսակի մեջ և թույլ է տալիս արագ կազմակերպել լիարժեք երկէկրանանի աշխատանքային տարածք ցանկացած վայրում (գրասենյակում, գործուղման ընթացքում, տանը): Սարքը ունենի 15.6 դյույմ (39.62 սմ) անկյունագծով IPS մատրիցայով լայնաֆորմատ (16:9) էկրան՝ Full HD (1920 x 1080 պիքսել) կետայնությամբ և հորիզոնական ու |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ուղղահայաց 178°/178° լայն տեսանկյուններով՝ առանց գույների և հստակության կորստի: Էկրանը օժտված է հակաշողացող (Matte/Anti-glare) ծածկույթով, որը նվազեցնում է արտացոլումները արհեստական կամ բնական ուժեղ լուսավորության պայմաններում, ինչպես նաև ներկառուցված Blue Light Filter (կապույտ լույսի զտում) և Flicker-Free (առանց թարթման) տեխնոլոգիաներով՝ երկարատև աշխատանքի ժամանակ աչքերի հոգնածությունը նվազեցնելու համար: Մոնիտորը հագեցած է ժամանակակից ինտերֆեյսերի հավաքածուով՝ առանց լրացուցիչ անցումային հարմարիչների տարբեր սարքերին միանալու համար, ներառյալ՝ 2 հատ լիաֆունկցիոնալ USB Type-C պորտ (տվյալների/պատկերի փոխանցման և սնուցման համատեղմամբ), 1 հատ լիարժեք HDMI պորտ և 3.5 մմ (Mini-jack) աուդիո ելք ականջակալների համար: Ցածր էներգասպառման շնորհիվ սարքը ունի նոթբուքի կամ Power Bank-ի USB պորտից (5V/2A) անմիջապես սնուցվելու հնարավորություն: Սարքը ունի ներկառուցված ստերեո բարձրախոսներ, թեթև ու բարակ շրջանակներով (Slim design) ամուր կորպուս և լրակազմում ներառում է բազմաֆունկցիոնալ մագնիսական պատյան-տակդիր (Magnetic Smart Cover), որը փակ վիճակում պաշտպանում է էկրանը, իսկ բաց վիճակում ծառայում է որպես հարմար կարգավորվող տակդիր: Լրակազմում ներառված են նաև բոլոր անհրաժեշտ լարերը՝ USB Type-C-ից Type-C մալուխ, HDMI-ից Mini-HDMI մալուխ և USB Type-A-ից Type-C սնուցման մալուխ: Ապրանքը պետք նոր է , |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ և ունի պաշտոնական երաշխիքային սպասարկում: Ապրանքը նոր է , չօտագործված, անվնաս, չի պարունակում գործարանային դեֆեկտներ: Ապրանքը պրոֆեսիոնալ (մասնագիտացված) դասի է նախատեսված է մեծ ճնշումներով և երկարատև մասնագիտական աշխատանքի համար: Մատակարարումից առաջ ապրանքը և արտադրողի անվանումը մոդելը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Մատակարարումից առաջ ապրանքը և արտադրողի անվանումը մոդելը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Մատակարարումից առաջ, նախապես կներկայացվի նմուշ և կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

МИШОП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/168 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | марка | наименование производителя | технические характеристики |
| 140 | - | - | - | - |